ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 9-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի 2005-2006 ուսումնական տարվա բացման արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի սաներ, ծնողներ: Տեղունական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Մարգսյանը: Տեսուչ Տեր Հայրն ուրախությամբ նշեց, որ այս տարի լրանում է ճեմարանի վերաբացման 60-ամյակը, և որ այլևս վերացել են բոլոր այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք առկա էին 1945 թվականին: Այս տարվա ընդունելության քննություններից հետո ճեմարան է ընդունվել 43 դիմորդ, իսկ ուսանողների ընդհանուր թիվը նոր ուսումնական տարում հասնում է 240-ի:

Ավետարանի ընթերցումից և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականից հետո, ներկաներին իր Հայրական օրհնությունը բաշխեց Նորին Սրբությունը:

«Մեր և հավատք: Հավատքով մենք պիտի մեր քայլերն ուղղենք այս կրթական հաստատություն, և հավատքը պետք է հանապազօրյա աղոթքով զորացնենք մեր մեջ, որպեսզի պտղաբեր դառնա այդ հավատքը, որպեսզի գործի վերածվի: Գործով շենացնի, զարդարի ինչպես մեր անհատական, այնպես էլ մեր հասարակական, հայրենական ազգային կյանքը: Այդ հավատքը կարող է պտղաբեր լինել, եթե մենք մեր հոգում կրում ենք սերը, սերը հանդեպ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին և հանդեպ հավատավոր մեր ժողովուրդը: Այս երկու շնորհներով, այս երկու հատկություններով մենք կարող պիտի լինենք մեր ժողովրդի սպասումին ընդառաջ ելնել:

...Այս փարի ազգովի մենք տոնախմբում ենք Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակը, և իմ մաղթանքը պիտի լինի, որ հոբելյանական այդ կարևոր տարեդարձի խորհուրդը մենք կարողանանք ընկալել, հաղորդ դառնալ և վերահմաստավորել մեր ներկա կյանքի մեջ, մեր ներկա առաքելության գործում»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով և Հայրապետական մաղթերգով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ